բուժօգնություն ապահովելու համար, ինչպես նաև ակտիվացնի աշխատանքները բժշկական օգնության տարբեր հարցերի վերաբերյալ բժշկական և ոչ բժշկական անձնակազմի գիտելիքների և հմտությունների հետագա ամրապնդման ուղղությամբ: Քրեակատարողական ծառայությանը անհրաժեշտ են համակարգված և փոխլրացնող ջանքեր՝ կարգացնելու քրեակատարողական համակարգի անձնակազմի կարողությունները՝ ազատությունից զրկված անձանց համար կիրառելու վերականգնողական գործիքներ և ծրագրեր՝ ուղղված ազատությունից զրկված անձանց կարիքները բավարարելուն: Վերականգնողական գործընթացին կներգրավվեն նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

## Որքա՞ն կարժենա Ծրագիրը

- Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 550.000 եվրո:
- Ծրագիրը ԵԽ՝ Հայաստանի համար 2023-2026 թթ. գործողությունների ծրագրի մի մասն է: Գործողությունների ծրագիրը ռազմավարական ծրագրավորման փաստաթուղթ է, որի նպատակն է մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտներում Հայաստանի օրենսդրությունը, հաստատությունները և պրակտիկան համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին: Գործողությունների ծրագիրը նպատակ ունի աջակցել Հայաստանին՝ որպես ԵԽ անդամ պետություն իր պարտավորությունների կատարմանը:

## Ինչպե՞ս ստանալ լրացուցիչ տեղեկատվություն

- Եվրոպայի խորհրդի՝ ոստիկանության և ազատությունից զրկման հարցերով համագործակցության ստորաբաժանում, https://www.coe.int/en/web/cooperation-in-police-and-dePrib-
- Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ, www.coe.int/en/web/Yerevan
- Կոնտակտային անձ՝ Դիանա Ղազարյան, Ծրագրի ղեկավար, Diana.ghazaryan@coe.int

## Եվրոպայի խորհրդի մասին

ԵԽ-ն առաջատար եվրոպական միջկառավարական կազմակերպություն է, որը լայն և ընդունելի դերակատարում ունի ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Այս ոլորտում գործունեությունը հիմնված է ԵԽ չափանիշների, դրանց իրականացումը վերահսկելու նպատակով Անդամ պետություններում ներդրված մշտադիտարկման մեխանիզմների և քրեակատարողական ու պրոբացիոն ծառայություններում (այդ թվում՝ ազատազրկման պայմանների և ազատությունից զրկված անձանց բուժման առնչությամբ) այս չափանիշների կիրառումը բարելավելու կարիք ունեցող պետություններին տրամադրվող տեխնիկական աջակցություն ապահովող գործողությունների միջև փոխգործակցության վրա:

The Council of Europe is the continent's leading human rights organisation. It comprises 46 member states, including all members of the European Union. All Council of Europe member states have signed up to the European Convention on Human Rights, a treaty designed to protect human rights, democracy and the rule of law. The European Court of Human Rights oversees the implementation of the Convention in the member states.

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային` որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

**www.coe.int**

ENG/
HYE



# Strengthening the Protection of the Rights of Persons in Detention

# Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության ամրապնդումը





www.coe.int

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

## What is the overall goal?

The Project will assist national authorities to further enhance penitentiary reform and health care, and the protection of the human rights of persons deprived of liberty.

It builds upon results achieved under the project "Enhancing healthcare and human rights protection in prisons in Armenia" (2019-2022). The focus will be on consolidation of already achieved results and expansion of the work to enable favorable conditions for treatment and medical services provided to inmates in compliance with the Council of Europe (CoE) standards.

The envisaged changes will ensure full compliance of the Armenian legislation and practice with standards of European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment, Recommendation Rec (2006)2 of the Committee of Ministers to member states on the European Prison Rules, other CM Recommendations in prison and case law of the European Court of Human Rights.

## What do we expect to achieve?

- The institutional capacity of the Penitentiary Medicine Center in the field of telemedicine and digitalization of medical files is further enhanced in order to provide quality healthcare in the penitentiary system.
- The knowledge and skills of medical and non-medical staff on different topics on provision of health care in prison are further consolidated aiming to strengthen the capacities to work with inmates with mental disorders and enhance the prevention of suicide and self-harm cases.
- The capacities of prison staff to apply tools and rehabilitation programmes for persons deprived of liberty are enhanced.
- The penitentiary regulatory framework is harmonised with the new Penitentiary Code, with a view to provide better resocialisation of inmates, and in line with Council of Europe standards.

## Who benefits from the Project?

- Project Partners: Ministry of Justice, Ministry of Health, Prison Medicine Center, Penitentiary Service,
- Target Groups: medical and non-medical staff of Prison Medicine Center, Penitentiary Service,and other professionals,
- End beneficiaries: citizens and society at large,

## How will the Project work?

The Project will follow the main CoE principles throughout its intervention. All interventions will be in line with CoE human rights standards and shall have due regard to the dignity, health, safety and well-being of persons deprived of liberty, and it must take full account of the individual characteristics, circumstances and needs of each specific inmate in order to ensure that each case is dealt with justly and fairly. Prison Medicine Center shall further enhance the institutional capacity in order to provide quality health care in the penitentiary system, as well as step up efforts for further consolidating the knowledge and skills of medical and non-medical staff on different topics on provision of health care. Co-ordinated and complementary work is required for the Penitentiary Service to strengthen the capacities of prison staff to apply rehabilitation tools and programmes for persons deprived of liberty to meet complex needs of inmates. Civil society organisations will be also involved in the rehabilitation process.

## How much will it cost?

- The total budget of the Project is 550 000 EUR.
- The Project is a part of the CoE Action Plan for Armenia 2023-2026. The Action Plan is a strategic programming instrument that aims to bring Armenia's legislation, institutions and practice further into line with European standards in the areas of human rights, the rule of law and democracy. The Action Plan is intended to support the country's efforts to honour its obligations as a CoE member State.

## How do we get more information?

- Cooperation in Police and Deprivation of Liberty Unit of the Council of Europe, https://www.coe.int/en/web/cooperation-in-police-and-deprivation-of-liberty
- Council of Europe Office in Yerevan, www.coe.int/en/web/yerevan
- Contact person: Diana Ghazaryan, Senior Project Officer, Diana.ghazaryan@coe.int

## About the Council of Europe

The CoE is the leading European intergovernmental organisation with an extensive and recognised standing in the area of protection of the human rights of persons deprived of liberty. The work in these areas is based on the established synergy between the CoE standards, the monitoring mechanisms put in place to supervise their implementation by the Member States and the technical assistance activities provided to assist countries in need to improve the application of these standards inter alia within their prisons and probation services, the detention conditions and the treatment of inmates.

## Ո՞րն է ընդհանուր նպատակը

Ծրագիրը կաջակցի ազգային իշխանություններին քրեակատարողական և առողջապահության ոլորտների բարեփոխումների հետագա ամրապընդման և ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության հարցերում:

Այն հիմնվում է «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի շրջանակներում ձեռք բերված արդյունքների վրա (2019-2022):

Ուշադրության կենտրոնում կլինեն արդեն իսկ ձեռք բերված արդյունքների ամրապնդումը և աշխատանքի ընդլայնումը՝ ազատությունից զրկված անձանց համար ԵԽ չափանիշներին համապատասխան բարենպաստ պայմաններ և որակյալ բժշկական ծառայություններ տրամադրելու համար:

Նախատեսվող փոփոխությունները կապահովեն Հայաստանի օրենսդրության և պրակտիկայի լիարժեք համապատասխանությունը Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի չափանիշներին, Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ (2006) 2 Rec հանձնարարականին, Նախարարների կոմիտեի այլ հանձնարարականներին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

## Ո՞րն է ակնկալվող արդյունքը

- Քրեակատարողական համակարգում որակյալ առողջապահական ծառայություններ ապահովելու նպատակով Քրեակատարողական բժշկության կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունը բարելավվել է հեռաբժշկության և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ոլորտներում:
- Քրեակատարողական հիմնարկում բուժօգնության տրամադրման վերաբերյալ տարբեր թեմաների շրջանակներում բժշկական և ոչ բժշկական անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները ամրապնդվել են՝ նպատակ ունենալով բարձրացնել հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց հետ աշխատելու կարողությունները և ուժեղացնել ինքնասպանության և ինքնավնասման դեպքերի կանխարգելումը:
- Ազատությունից զրկված անձանց համար վերականգնողական ծրագրերի և գործիքների կիրառմանն ուղղված բուժանձնակազմի կարողությունններն ամրապնդվել են:
- Քրեակատարողական օրենսդրական շրջանակը համապատասխանեցվել է նոր Քրեակատարողական օրենսգրքին՝ նպատակ ունենալով ապահովել Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան ազատությունից զրկված անձանց առավել արդյունավետ վերասոցիալականացումը:

## Ովքե՞ր են Ծրագրի շահառուները

- Ծրագրի գործընկերներ. Արդարադատության նախարարություն, Առողջապահության նախարարություն, Քրեակատարողական բժշկության կենտրոն, Քրեակատարողական ծառայություն,
- Թիրախային խմբեր. Քրեակատարողական բժշկության կենտրոնի և Քրեակատարողական ծառայության բժշկական և ոչ բժշկական անձնակազմ և այլ մասնագետներ,
- Վերջնական շահառուներ. Քաղաքացիները և լայն առումով՝ հասարակությունը,

## Ինչպե՞ս է իրականացվելու Ծրագիրը

Ծրագիրը հետևելու է Եվրոպայի խորհրդի հիմնական սկզբունքներին իրականացման ողջ ընթացքում: Բոլոր միջամտությունները պետք է համապատասխանեն Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների չափանիշներին և պատշաճ ուշադրություն դարձնեն ազատությունից զրկված անձանց արժանապատվությանը, առողջությանը, անվտանգությանը և բարեկեցությանը, և պետք է լիովին հաշվի առնեն ազատությունից զրկված յուրաքանչյուր առանձին անձի անհատական առանձնահատկությունները, հանգամանքները և կարիքները՝ յուրաքանչյուր դեպքին արդար և անաչառ արձագանքելու նպատակով: Քրեակատարողական բժշկության կենտրոնը պետք է շարունակի հզորացնել ինստիտուցիոնալ կարողությունները՝ քրեակատարողական համակարգում որակյալ